ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ, «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ, «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում առաջարկվող փոփոխությունները և լրացումները

Հոդված 5. Ազգային ժողովի նախագահը

1. Ազգային ժողովի նախագահը ներկայացնում է Ազգային ժողովը և ապահովում նրա բնականոն գործունեությունը:

2. Ազգային ժողովի նախագահը՝

1) նախագահում է Ազգային ժողովի նիստերը.

2) գումարում է Ազգային ժողովի արտահերթ նիստեր և նստաշրջաններ.

3) շրջանառության մեջ է դնում Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված հարցերը և նշանակում է գլխադասային հանձնաժողով.

4) Հանրապետության նախագահին է ուղարկում Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունները, օրենքները, ինչպես նաև Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշումները.

4.1) Սահմանադրության 129-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի ընդունած օրենքը.

5) ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի որոշումները, հայտարարությունները և ուղերձները.

6) հրավիրում և նախագահում է Խորհրդի նիստերը.

7) Ազգային ժողովի և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում հերթական նստաշրջանի և նիստերի օրակարգերի նախագծերը.

8) ստորագրում և հրապարակում է Խորհրդի որոշումները.

9) հաստատում է Ազգային ժողովի հանձնաժողովների կազմերը և դրանցում փոփոխությունները.

10) կարող է Ազգային ժողովի նախագահի տեղակալին տալ Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված հանձնարարություններ.

11) ըստ անհրաժեշտության հրավիրում է քաղաքական խորհրդակցություններ.

12) տնօրինում է Ազգային ժողովի նյութական միջոցները.

13) նշանակում է Ազգային ժողովի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ղեկավարին, ինչպես նաև Աշխատակազմում պետական ծառայության բարձրագույն պաշտոններում, նրանց ազատում այդ պաշտոններից.

14) հաստատում է Աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների անվանացանկը, անձնագրերը, ինչպես նաև Աշխատակազմի հաստիքացուցակը և աշխատողների պաշտոնային դրույքաչափերը.

15) իրավասու մշտական հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ հաստատում է Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի (այսուհետ՝ Բյուջետային գրասենյակ) փորձագետներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև նրանց պաշտոնների նկարագրերը.

16) հաստատում է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգերը.

17) կարող է հրավիրել խորհրդարանական լսումներ՝ սահմանելով դրանց անցկացման կարգը.

18) կարող է ձևավորել հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմիններ.

19) նշանակում է Սահմանադրական դատարանում Ազգային ժողովի ներկայացուցիչ.

20) կարող է ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր ուղարկել դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունք ունեցող միջազգային կազմակերպություններին և օտարերկրյա հասարակական կազմակերպություններին.

21) հաստատում է Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները.

22) պարգևատրում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվո մեդալով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվոգրով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի շնորհակալագրով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հուշամեդալով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հուշանվերով, ինչպես նաև խրախուսում է դրամական պարգևատրմամբ:

3. Իր լիազորություններն իրականացնելիս Ազգային ժողովի նախագահն ընդունում է որոշումներ և կարգադրություններ, որոնք երկու աշխատանքային օրվա

ընթացքում տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (www.parliament.am), բացառությամբ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակողների:

(5-րդ հոդվածը լրաց. 17.01.18 ՀՕ-50-Ն)

Հոդված 8. Խմբակցության լիազորությունները

1. Խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով՝

1) հանդես գալու օրենսդրական նախաձեռնությամբ.

2) Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու Ազգային ժողովի որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագիծ.

3) իր առաջադրած օրենքի նախագիծը համարելու առաջնահերթ.

4) քաղաքական կոալիցիա կազմելու այլ խմբակցությունների հետ, ինչպես նաև դուրս գալու կոալիցիայից.

5) մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոնում առաջադրելու թեկնածու.

6) Ազգային ժողովի հանձնաժողովում իրեն վերապահված տեղում նշանակելու խմբակցության անդամի, ինչպես նաև նրան փոխելու.

7) առաջադրելու վարչապետի թեկնածու.

8) իրավասու մշտական հանձնաժողովին առաջադրելու թեկնածուներ Ազգային ժողովի կողմից ընտրվող կամ նշանակվող պաշտոններում.

9) առաջադրելու Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածու.

9.1) օրենքով նախատեսված դեպքերում առաջադրելու ինքնավար մարմնի անդամի թափուր պաշտոնում թեկնածու.

10) գրավոր հարցապնդումներով դիմելու Կառավարության անդամներին.

11) ներկայացնելու առաջարկներ Սահմանադրության փոփոխությունների, օրենքի, Ազգային ժողովի որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագծի վերաբերյալ.

12) նշանակելու և փոխելու Խորհրդում իր ներկայացուցչին.

13) իր անդամին առաջարկելու միջազգային խորհրդարանական կազմակերպության, ինչպես նաև միջխորհրդարանական հանձնաժողովում Ազգային ժողովի կամ այլ պաշտոնական պատվիրակության կազմում.

14) իր անդամին առաջարկելու Ազգային ժողովի բարեկամական խմբի կազմում.

15) հրավիրելու խորհրդարանական լսումներ.

16) իր անդամին խմբակցությունից հեռացնելու:

2. Իր լիազորություններն իրականացնելիս խմբակցությունն ընդունում է որոշումներ:

3. Խմբակցության որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած խմբակցության անդամների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է խմբակցության անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

4. Ընդդիմադիր խմբակցությունն ունի Կանոնակարգով սահմանված գործունեության երաշխիքներ:

Հոդված 9. Խմբակցության գործունեությունը

1. Խմբակցությունը գործում է Կանոնակարգին և իր որոշմամբ հաստատված կանոնադրությանը համապատասխան:

2. Խմբակցության կանոնադրությամբ սահմանվում են՝

1) խմբակցության անվանումը,

2) խմբակցության անդամների իրավունքները և պարտականությունները,

3) խմբակցության ղեկավարի և քարտուղարի ընտրության կարգը, ինչպես նաև նրանց լիազորությունները,

4) խմբակցության նիստերի գումարման և անցկացման կարգը,

5) խմբակցության որոշումների ընդունման կարգը,

6) խմբակցության կողմից օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու ընթացակարգը,

7) խմբակցության կողմից Ազգային ժողովի որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագծի ներկայացման ընթացակարգը,

8) խմբակցության կողմից վարչապետի թեկնածուի առաջադրման ընթացակարգը,

9) իրավասու մշտական հանձնաժողովին Ազգային ժողովի կողմից ընտրվող կամ նշանակվող պաշտոններում խմբակցության կողմից թեկնածուների առաջադրման ընթացակարգը,

9.1) ինքնավար մարմնի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի առաջադրման ընթացակարգը,

10) խմբակցության կողմից Կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու ընթացակարգը,

11) հանրաքվեի և Հանրապետության նախագահի ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով խմբակցության կողմից Սահմանադրական դատարան դիմելու ընթացակարգը,

12) Սահմանադրության փոփոխությունների, օրենքների և Ազգային ժողովի որոշման նախագծերի վերաբերյալ խմբակցության առաջարկների ներկայացման ընթացակարգը,

13) խմբակցության անդամին հեռացնելու կարգը,

14) խմբակցության որոշումների ընդունման ընթացակարգը,

15) խմբակցության գործունեության կարգին վերաբերող այլ դրույթներ:

3. Խմբակցության նիստերը, որպես կանոն, հրավիրվում են Ազգային ժողովի հերթական նիստերին հաջորդող շաբաթվա ընթացքում:

4. Պատգամավորը կարող է խմբակցությունից դուրս գալ խմբակցության ղեկավարին ուղղված գրավոր դիմումով կամ Ազգային ժողովի նիստում՝ այդ մասին հայտարարությամբ հանդես գալով:

5. Խմբակցության գործունեությունը դադարում է, եթե նրա բոլոր անդամները դուրս են գալիս խմբակցությունից, և վերականգնվում է, եթե նրա կազմում ընդգրկվում է դրա իրավասությունն ունեցող առնվազն մեկ պատգամավոր:

Հոդված 38. Հերթական նստաշրջանի օրակարգը

1. Հերթական նստաշրջանի օրակարգում կարող են ընդգրկվել միայն Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված, այդ թվում՝ նախորդ հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկված հարցերը:

2. Հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագծում ընդգրկվում են հերթական նիստերի առաջին օրվա դրությամբ նստաշրջանի օրակարգում ընդգրկվելու ենթակա հետևյալ հարցերը.

1) պարտադիր քննարկման ենթակա հարցերը,

2) այն հարցերը, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ստացվել է, կամ եզրակացությունը ներկայացնելու ժամկետը լրացել է:

3. Պարտադիր քննարկման ենթակա հարցերն են՝

1) թափուր պաշտոնում ընտրության կամ նշանակման մասին հարցը.

2) Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին հարցը.

3) Կառավարության վստահության հարցը.

4) Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծը.

5) վարչապետին անվստահություն հայտնելու մասին հարցը.

6) Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին հարցը.

7) ~~Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի~~ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից ընտրված պաշտոնատար անձի լիազորությունները դադարեցնելու մասին հարցերը.

7.1) ինքնավար մարմնի եզրակացության հիման վրա՝ այդ ինքնավար մարմնի անդամի լիազորությունները դադարեցնելու մասին հարցը.

8) պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին հարցը.

9) Մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին հարցը.

10) խմբակցության հարցապնդման պատասխանը քննարկելու մասին հարցը.

11) ընդդիմադիր խմբակցության կողմից արտահերթ համարված հարցը.

12) խմբակցության կողմից առաջնահերթ համարված օրենքի նախագիծը.

13) Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին հարցը.

14) Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի զեկույցը.

15) Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգելու մասին հարցը.

16) Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգելու մասին հարցը.

17) Ազգային ժողովի նախագահի նախաձեռնությամբ ներկայացված հայտարարության կամ ուղերձի նախագիծը.

18) պետական մարմինների, պաշտոնատար անձանց զեկույցները, հաղորդումները և հաշվետվությունները.

18.1) Սահմանադրության փոփոխության կամ օրենքի նախագիծը երկրորդ ընթերցմամբ քննարկելու մասին հարցը.

19) օրենքով կամ Ազգային ժողովի որոշմամբ նախատեսված քննարկման ժամկետ ունեցող հարցերը:

4. Պարտադիր քննարկման ենթակա հարցերը հերթական նստաշրջանի և նիստերի օրակարգերի նախագծերում ընդգրկվում են միաժամանակ, բացառությամբ՝

1) սույն հոդվածի 3-րդ մասի 18-րդ կետում նշված հարցերի, որոնք հերթական նիստերի օրակարգի նախագծում ընդգրկվում են Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելուց հետո՝ երկամսյա ժամկետում.

2) սույն հոդվածի 3-րդ մասի 18.1-ին կետում նշված հարցերի, որոնք հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկվում են համապատասխան նախագծի առաջին ընթերցմամբ քննարկելու մասին հարցը հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկվելու պահից, իսկ հերթական նիստերի օրակարգի նախագծում ընդգրկվում են Կանոնակարգի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված կարգով.

5. Հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագիծը կազմված է հետևյալ բաժիններից.

1) առաջին բաժին, որտեղ ներառվում են նախորդ հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկված, ինչպես նաև պարտադիր քննարկման ենթակա հարցերը.

2) երկրորդ բաժին, որտեղ ներառվում են այն հարցերը, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը ներկայացրել է դրական եզրակացություն, բացառությամբ Կանոնակարգի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 18.1-ին կետում նշված հարցերի, ինչպես նաև Կանոնակարգի 78-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ի կետով սահմանված կարգով այլընտրանքային համարված նախագծերը.

3) երրորդ բաժին, որտեղ ներառվում են այն հարցերը, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը բացասական եզրակացություն է ներկայացրել կամ Կանոնակարգով սահմանված ժամկետում եզրակացություն չի ներկայացրել, բացառությամբ Կանոնակարգի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 18.1-ին կետում նշված հարցերի:↩

6. Հերթական նստաշրջանի օրակարգի և դրանում լրացումներ կատարելու մասին նախագծերը մշակում և Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում Աշխատակազմը, որից հետո Ազգային ժողովի նախագահը նախագիծը ներկայացնում է Խորհրդի քննարկմանը:

7. Հերթական նստաշրջանի օրակարգի և դրանում լրացումներ կատարելու մասին նախագծերը Խորհրդի կողմից հաստատվելուց հետո ներկայացվում են Ազգային ժողովի քննարկմանը:

8. Հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագիծն Ազգային ժողովի նիստում քննարկվում է հետևյալ կարգով.

1) հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս Ազգային ժողովի նախագահը, որից հետո նրան կարող են տրվել հարցեր.

2) հարակից զեկուցում չի լինում.

3) հեղինակների պահանջով անցկացվում են նախագծի երրորդ բաժնում ներառված այն հարցերի կարճատև քննարկումները, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը ներկայացրել է բացասական եզրակացություն: Այդ դեպքում մինչև երեքական րոպե տևողությամբ ելույթի իրավունք ունեն հեղինակը, ինչպես նաև գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը, որից անմիջապես հետո նախագիծն օրակարգում ընդգրկելու մասին հարցը դրվում է քվեարկության.

4) մինչև երեքական րոպե տևողությամբ ելույթի իրավունք ունեն նախագծի երրորդ բաժնում ներառված այն հարցերի հեղինակները, որոնց վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը Կանոնակարգով սահմանված ժամկետում եզրակացություն չի ներկայացրել: Հեղինակի ելույթից անմիջապես հետո նախագիծն օրակարգում ընդգրկելու մասին հարցը դրվում է քվեարկության.

5) մտքերի փոխանակություն.

6) Ազգային ժողովի նախագահի եզրափակիչ ելույթից հետո նախագծի երրորդ բաժնի՝ սույն մասի 3-րդ և 4-րդ կետերում նշված հարցերից բացի, օրակարգում ընդգրկելու մասին մնացած հարցերն առանձին-առանձին դրվում են քվեարկության.

7) հարցի քննարկման ընդհանուր տևողությունն ավելացվում է սույն մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված ելույթների համար անհրաժեշտ ժամանակով:

9. Հերթական նստաշրջանի օրակարգի կամ դրանում լրացումներ կատարելու մասին նախագծի առաջին և երկրորդ բաժիններում ներառված հարցերը հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկվում են առանց քվեարկության:

10. Քվեարկության արդյունքում հերթական նստաշրջանի օրակարգում չընդգրկված հարցը շրջանառությունից հանվում է:

Հոդված 64. Հարցի քննարկման հատուկ ընթացակարգը

1. Առանձին հարցի քննարկման համար Ազգային ժողովը կարող է սահմանել հատուկ ընթացակարգ, որով չի կարող սահմանափակվել զեկուցողների, նրանց հարց տվողների և ելույթ ունեցողների թիվը, ինչպես նաև կրճատվել ելույթի կամ հարց տալու համար Կանոնակարգով ուղղակիորեն սահմանված ժամանակը:

2. Հատուկ ընթացակարգի մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունեն՝

1) արտահերթ նստաշրջանը կամ նիստը նախաձեռնողը՝ օրակարգում ընդգրկված հարցի քննարկման մասին.

2) ~~գլխադասային~~ մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովը՝ իր իրավասությանը վերապահված հարցի քննարկման մասին.

3) հիմնական զեկուցողը՝ իր ներկայացրած հարցի քննարկման մասին.

4) քննիչ հանձնաժողովը՝ իր զեկույցի քննարկման մասին~~՝~~.

5) ինքնավար մարմնի նախագահի կամ անդամի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունեցող մարմինը:

3. Հարցի քննարկման հատուկ ընթացակարգի մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը կարող է ներկայացվել մինչև Ազգային ժողովի նիստում հարցի քննարկումը սկսվելը և քվեարկության է դրվում առանց քննարկման:

Հոդված 146. Ինքնավար մարմինների անդամների նշանակումը

1. Օրենքով ստեղծված ինքնավար մարմինների անդամները նշանակվում են օրենքով և հատուկ ընթացակարգի մասին Ազգային ժողովի որոշմամբ սահմանված կարգով, գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

2. Եթե ինքնավար մարմնի անդամի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն օրենքով վերապահված է Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությանը, իսկ Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությունները մեկից ավել են, ապա Ազգային ժողովի կառավարող կամ ընդդիմադիր խմբակցությունները ինքնավար մարմնի անդամի համապատասխան թափուր պաշտոնում առաջադրում են նախապես համաձայնեցված՝ մեկ միասնական թեկնածու:

3. Եթե Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությանը վերապահված ինքնավար մարմնի անդամի թափուր պաշտոնում օրենքով սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է Ազգային ժողովի կառավարող խմբակցությանը:

Հոդված 153. Սահմանադրության սահմանված պայմանները խախտելու դեպքում Ազգային ժողովի կողմից ընտրված պաշտոնատար անձանց լիազորությունների դադարեցման կարգը

1. Սահմանադրության 95-րդ հոդվածով պատգամավորների համար սահմանված անհամատեղելիության պահանջներից որևէ մեկը խախտելու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, Հաշվեքննիչ պալատի, Կենտրոնական բանկի խորհրդի անդամների լիազորությունները կարող են դադարեցվել ~~Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի~~Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

2. Օրենքով սահմանված դեպքերում գլխավոր դատախազին պաշտոնանկ անելու, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքերից բացի, Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված որևէ այլ պայման խախտելու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, Հաշվեքննիչ պալատի կամ Կենտրոնական բանկի խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման վերաբերյալ Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը: Նախագիծն Ազգային ժողովի նիստում քննարկվում է Կանոնակարգի 149-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, հետևյալ տարբերությամբ՝ հիմնական զեկուցողից հետո ելույթ կարող է ունենալ և հարցերին պատասխանել, ինչպես նաև եզրափակիչ ելույթ ունենալ նախագծում նշված պաշտոնատար անձը:

3. ~~Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի~~ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը Սահմանադրության պայմաններից որևէ մեկը խախտելու վերաբերյալ եզրակացությունն Ազգային ժողով է ներկայացնում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4. Եզրակացությունը ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, Ազգային ժողովի նախագահն ապահովում է դրա տրամադրումը պատգամավորներին, իսկ եզրակացությունում նշված պաշտոնատար անձի լիազորությունների դադարեցման մասին հարցը քննարկվում է Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում:

5. Եզրակացությունում նշված պաշտոնատար անձն առնվազն մեկ շաբաթ առաջ գրավոր տեղեկացվում է Ազգային ժողովի նիստում հարցի քննարկման մասին: Նրա բացակայության դեպքում հարցի քննարկումը հետաձգվում է երկու անգամ՝ երկուական շաբաթով, որից հետո այն քննարկվում է հաջորդ հերթական նիստերում՝ անկախ նրա ներկայությունից:

6. Եզրակացությունում նշված պաշտոնատար անձի լիազորությունների դադարեցման մասին հարցն Ազգային ժողովի նիստում քննարկվում է Կանոնակարգի 149-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, հետևյալ տարբերությամբ՝ որպես հիմնական զեկուցող հանդես է գալիս ~~Բարձրաստիճան~~

~~պաշտոնատար անձանց էթիկայի~~ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահը, որից հետո ելույթ կարող է ունենալ և հարցերին պատասխանել եզրակացությունում նշված պաշտոնատար անձը:

7. Հարցի քննարկման ավարտին քվեարկության է դրվում ~~Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի~~Կոռուպցիայի կանխարգելման –հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ եզրակացությունում նշված պաշտոնատար անձի լիազորությունների դադարեցման մասին հարցը:

8. Գլխավոր դատախազին պաշտոնանկ անելու մասին, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամի, Կենտրոնական բանկի նախագահի, Հաշվեքննիչ պալատի անդամի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, իսկ Կենտրոնական բանկի խորհրդի մյուս անդամների լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ որոշումը՝ գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Հոդված 153.1. Ինքնավար մարմնի անդամի լիազորությունների դադարեցման կարգը

1. Ազգային ժողովի կողմից նշանակված ինքնավար մարմնի անդամի լիազորություններն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում կարող են դադարեցվել այդ ինքնավար մարմնի եզրակացության հիման վրա՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

2. Եզրակացությունն օրենքով սահմանված կարգով ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, Ազգային ժողովի նախագահն ապահովում է դրա տրամադրումը պատգամավորներին, իսկ ինքնավար մարմնի անդամի լիազորությունների դադարեցման մասին հարցը քննարկվում է Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում:

3. Եզրակացությունում նշված ինքնավար մարմնի անդամն առնվազն մեկ շաբաթ առաջ գրավոր տեղեկացվում է Ազգային ժողովի նիստում հարցի քննարկման մասին: Նրա բացակայության դեպքում հարցի քննարկումը հետաձգվում է երկու անգամ՝ երկուական շաբաթով, որից հետո այն քննարկվում է հաջորդ հերթական նիստերում՝ անկախ նրա ներկայությունից:

4. Ինքնավար մարմնի անդամի լիազորությունների դադարեցման մասին հարցն Ազգային ժողովի նիստում քննարկվում է Կանոնակարգի 149-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, հետևյալ տարբերությամբ՝ որպես հիմնական զեկուցող հանդես է գալիս ինքնավար մարմնի նախագահը կամ օրենքով սահմանված կարգով նրան փոխարինողը, որից հետո ելույթ կարող է ունենալ և հարցերին պատասխանել եզրակացությունում նշված ինքնավար մարմնի անդամը:

5. Հարցի քննարկման ավարտին քվեարկության է դրվում ինքնավար մարմնի եզրակացության հիման վրա՝ ինքնավար մարմնի անդամի լիազորությունների դադարեցման մասին հարցը:

6. Ինքնավար մարմնի անդամի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Հոդված 157. Սահմանադրության 95-րդ հոդվածի պայմանները խախտելու դեպքում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելը

1. Սահմանադրության 95-րդ հոդվածի պահանջները խախտելու դեպքում սույն հոդվածով սահմանված կարգով Սահմանադրական դատարան է դիմում Խորհուրդը, ինչպես նաև կարող են դիմել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, եթե՝

1) ~~Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի~~ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն Ազգային ժողով է ներկայացրել պատգամավորի կողմից Սահմանադրության 95-րդ հոդվածի պահանջները խախտելու վերաբերյալ եզրակացություն.

2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված դեպքում՝ ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար պատգամավորի նկատմամբ նշանակվել է տուգանք.

3) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված դեպքում՝ ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու համար պատգամավորը զրկվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

4) ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար պատգամավորը ենթարկել է վարչական պատասխանատվության:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում համապատասխան դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, իրավասու դատարանը դատավճռի պատճենն ուղարկում է Ազգային ժողովի նախագահին:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում համապատասխան որոշումն ընդունելուց հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, իրավասու մարմինը որոշման պատճենն ուղարկում է Ազգային ժողովի նախագահին:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում համապատասխան փաստաթուղթն ստանալուց հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, Ազգային ժողովի նախագահը հրավիրում է Խորհրդի նիստ՝ փաստաթղթում նշված պատգամավորի

լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու համար, և այդ մասին անհապաղ գրավոր տեղեկացնում պատգամավորին:

5. Պատգամավորի բացակայության դեպքում հարցի քննարկումը հետաձգվում է մեկ շաբաթով և վերսկսվում է սահմանված ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրը հրավիրված Խորհրդի նիստում՝ անկախ նրա ներկայությունից:

6. ~~Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի~~ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունը Խորհրդի նիստում ներկայացնում է հանձնաժողովի նախագահը, իսկ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված մյուս հիմքերը՝ Ազգային ժողովի նախագահը: Հարցի քննարկման ընթացքում՝ համապատասխան փաստաթղթում նշված պատգամավորը կամ նրա լիազորած այլ անձը կարող է ելույթ ունենալ, պատասխանել հարցերին, հանդես գալ եզրափակիչ ելույթով:

7. Հարցի քննարկման ավարտին քվեարկության է դրվում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին հարցը:

8. Եթե հարցի քննարկումն սկսվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Խորհուրդը պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշում՝

1) ընդունում է, ապա Ազգային ժողովի նախագահն այն 24 ժամվա ընթացքում ուղարկում է Սահմանադրական դատարան՝ նշելով Սահմանադրական դատարանում հարցի քննության ընթացքում որպես ներկայացուցիչ հանդես գալու իրավունք ունեցող պատգամավորի անունը, ազգանունը.

2) չի ընդունում, ապա Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին համապատասխան՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը կարող է ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով դիմել Սահմանադրական դատարան:

2. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում առաջարկվող լրացումը

Հոդված 89. Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները

1. Բարձրագույն դատական խորհուրդը՝

1) կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները.

2) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա, ներառյալ՝ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին.

3) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուներին.

4) Ազգային ժողովին առաջարկում է Վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահի թեկնածուներին.

4.1) օրենքով նախատեսված դեպքում Ազգային ժողովին առաջարկում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թեկնածու.

5) լուծում է դատավորին մեկ այլ դատարան գործուղելու հարցը.

6) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.

7) լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

8) լուծում է դատավորի լիազորությունների դադարեցման հարցը.

9) արձանագրում է դատավորի լիազորությունների դադարման հիմք հանդիսացող հանգամանքի առկայությունը.

10) հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները.

11) իր և դատարանների բյուջետային հայտը ներկայացնում է Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար.

12) հաստատում է իր և դատարանների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և սահմանված կարգով ներկայացնում Կառավարություն.

13) բաշխում է դատարանների պահուստային ֆոնդի միջոցները.

14) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.

15) լուծում է Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

16) լուծում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի և նախագահի լիազորությունները դադարեցնելու հարցը.

17) արձանագրում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարման հիմք հանդիսացող հանգամանքի առկայությունը.

18) քննարկում է դատարանի կամ դատավորի անկախությունը վտանգող ցանկացած հարց և իրավասու մարմիններից պահանջում է հարցի լուծման ուղղությամբ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ.

19) իրավասու պետական մարմիններին առաջարկներ է ներկայացնում դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ.

20) դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ տալիս է կարծիք.

21) հաստատում է դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը դատարաններում շրջանառելու կարգը.

22) հաստատում է զանգվածային լրատվության միջոցների հետ իր և դատարանների փոխհարաբերության կանոնները.

23) հաստատում է դատարան փաստաթղթերի հանձնման, ըստ տեսակների՝ գործերի դասակարգման և դատարանների գործավարության այլ կանոններ.

24) Կառավարության համաձայնությամբ ավելացնում է առանձին դատարանների դատավորների թվակազմը, կրճատում է իր կողմից ավելացված դատավորների թվակազմը.

25) սահմանում է առաջին ատյանի դատարանների՝ սույն օրենսգրքով չսահմանված նստավայրերը, նստավայրերի սպասարկման տարածքը, հաստատում է դատավորների՝ ըստ նստավայրերի և մասնագիտացման բաշխումն ու թվակազմը.

26) սահմանում է դատարանի նիստերի դահլիճի և դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը.

27) սահմանում է դատական կազմի բացակայող դատավորներին փոխարինելու կարգը.

28) սահմանում է գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետներ՝ ըստ գործերի առանձին տեսակների և բարդության.

29) սահմանում է դատավորի ծանրաբեռնվածությունը հաշվարկելու կարգը, ինչպես նաև դատավորի ծանրաբեռնվածության չափորոշիչները.

30) սահմանում է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորների հերթապահություն սահմանելու կարգը.

31) հաստատում է Դատական դեպարտամենտի կանոնադրությունը և իրականացնում Դատական դեպարտամենտի հիմնադրի բոլոր լիազորությունները.

32) նշանակում և ազատում է Դատական դեպարտամենտի ղեկավարին.

33) Դատական դեպարտամենտի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է դատական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը, ինչպես նաև սահմանում է Դատական դեպարտամենտի հաստիքների քանակը.

34) սահմանում է դատական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար փակ մրցույթի անցկացման ընթացակարգը, ինչպես նաև բաց մրցույթում թեստավորման, հարցազրույցի անցկացման և թեկնածուների հատկանիշների գնահատման ընթացակարգը, մրցութային հանձնաժողովների ձևավորման ընթացակարգը և դրանց գործունեության կարգը.

35) սահմանում է դատական ծառայողի գործունեության գնահատման կարգը, չափանիշները և բնութագրի ձևը.

36) հաստատում է դատական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստում անցկացնելու կարգը.

37) դատական ծառայողների, դատական կարգադրիչների ուսուցման ծրագրերում ներառման նպատակով Արդարադատության ակադեմիա է ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկություններ.

38) սահմանում է դատական ծառայողների և դատական կարգադրիչների ուսումնառության ժամաքանակը.

39) սահմանում է դատական կարգադրիչներին որպես խրախուսանք շնորհվող կրծքանշանների տեսակները և ձևերը.

40) սահմանում է դատական կարգադրիչի կրծքանշանի տեսակները և ձևերը.

41) սահմանում է դատական կարգադրիչներին համազգեստ հատկացնելու և կրելու կարգը.

42) սահմանում է դատական կարգադրիչների ծառայությունում առաջին անգամ որպես դատական կարգադրիչ ծառայության անցնող քաղաքացիների երդման կարգը.

43) հաստատում է իր աշխատակարգը.

44) սահմանում է Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների շենքերի անցագրային կարգը և անվտանգության կանոնները.

45) իրականացնում է սույն օրենսգրքով սահմանված այլ լիազորություններ:

2. Բարձրագույն դատական խորհուրդը սույն հոդվածի 1-ին մասի 22-րդ, 25-րդ, 34-36-րդ, 41-րդ և 44-րդ կետերով նախատեսված իր լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև մյուս լիազորությունների իրականացման ժամանակ նորմատիվ կարգավորում սահմանելիս ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

3. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունները և լրացումները

Հոդված 20. Հանձնաժողովի կազմավորման կարգը և անդամներին ներկայացվող պահանջները

1. Հանձնաժողովը կազմված է յոթ անդամից՝ նախագահ և վեց անդամ: Հանձնաժողովի անդամների պաշտոնները ~~համարվում են քաղաքացիական պաշտոններ~~ինքնավար պաշտոններ են:

~~2. Հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին վարչապետի առաջարկությամբ, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով, նշանակում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ հինգ տարի պաշտոնավարման ժամկետով, բացառությամբ սույն օրենքով~~

~~նախատեսված դեպքերի: Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոն առաջանալու դեպքում Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում՝ Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձը, դիմում է վարչապետին՝ ներկայացնելով տվյալ պաշտոնի թեկնածուի համար անհրաժեշտ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ պաշտոնավարման ամբողջ՝ հինգ տարի ժամկետով նշանակվել սույն օրենքով սահմանված կարգով ստեղծված Հանձնաժողովի անդամ:~~

2. Հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով, նշանակում է Ազգային ժողովը՝ հինգ տարի ժամկետով, բացառությամբ Հանձնաժողովի առաջին կազմի անդամների նշանակման, ինչպես նաև սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերի: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Հանձնաժողովի նախագահ կամ լիազորությունների ամբողջ ժամկետով՝ Հանձնաժողովի անդամ:

2.1. Հանձնաժողովի նախագահի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունի Կառավարությունը: Հանձնաժողովի մյուս անդամների թափուր պաշտոններում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն հաջորդաբար՝ Կառավարությունը, Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը:

2.2. Հանձնաժողովի նախագահի կամ անդամի թափուր պաշտոնում թեկնածուն առաջադրվում է Հանձնաժողովի նախագահի կամ անդամի լիազորությունները դադարելու մասին սույն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով տեղեկացվելուց, Հանձնաժողովի նախագահի կամ անդամի լիազորությունները դադարեցվելուց, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահ կամ անդամ նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը չընդունվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Եթե Կառավարությանը կամ Ազգային ժողովի կառավարող խմբակցությանը վերապահված Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա նույն մարմինն այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում: Եթե Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությանը վերապահված Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա Ազգային ժողովի կառավարող խմբակցությունն այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում:

2.3. Հանձնաժողովի նախագահի կամ անդամի թափուր պաշտոնում նշանակումը կատարվում է այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Եթե Հանձնաժողովի անդամ նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը չի

ընդունվում, ապա նույն մարմնի կողմից այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը պահպանվում է:

3. ~~Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ, առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ ունեցող (որից առնվազն երեք տարին՝ ստորաբաժանումների համակարգման գործառույթներով օժտված կամ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում) և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:~~ Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք, ով ունի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն երեք տարին՝ քաղաքական, ինքնավար, վարչական կամ օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից):

Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա բարձրագույն իրավաբանական, առնվազն մեկը՝ բարձրագույն տնտեսագիտական կրթություն:

4. Հանձնաժողովի անդամը պաշտոնավարում է մինչև 65 տարին լրանալը:

5. Հանձնաժողովի անդամները չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացառությամբ գիտական, ստեղծագործական կամ մանկավարժական գործունեության: Հանձնաժողովի անդամն իր հրապարակային ելույթներում ցուցաբերում է քաղաքական զսպվածություն:

6. Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում Հանձնաժողովի անդամի նշանակման համար սույն հոդվածով սահմանված ընթացակարգով նշանակվում է Հանձնաժողովի նոր անդամ՝ պաշտոնավարման չլրացած ժամկետի մնացած ժամանակահատվածի համար: Եթե պաշտոնավարման մնացած ժամանակը պակաս է մեկ տարուց, ապա Հանձնաժողովի նոր անդամի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի՝ գումարած մնացած ժամանակահատվածը:

7. Այն դեպքում, երբ Հանձնաժողովի նախագահ է նշանակվում Հանձնաժողովի անդամներից մեկը, ապա նա պաշտոնավարում է մինչև իր՝ որպես Հանձնաժողովի անդամի պաշտոնավարման ժամկետի ավարտը: Եթե պաշտոնավարման մնացած ժամանակը պակաս է մեկ տարուց, ապա Հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի՝ գումարած մնացած ժամանակահատվածը:

8. Հանձնաժողովի անդամ չի կարող նշանակվել այն անձը, որը՝

1) չի համապատասխանում սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է դիտավորությամբ կատարած հանցագործության համար.

4) օրենքով սահմանված կարգով զրկվել է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

5) ունի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկով նախատեսված՝ դատավորի նշանակմանը խոչընդոտող հիվանդություն:

Հոդված 21. Հանձնաժողովի անդամների լիազորությունների դադարումը ~~և դադարեցումը~~, դադարեցումը և կասեցումը

~~1. Հանձնաժողովի անդամի լիազորությունների ժամկետը լրանում է նրա նշանակման օրվան հաջորդող հինգերորդ տարվա նույն օրը, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:~~

2. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են, եթե՝

1) լրացել է նրա պաշտոնավարման ~~առավելագույն~~ տարիքը.

1.1) ավարտվել է նրա լիազորությունների ժամկետը.

2) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն.

~~3) նա, նախապես տեղեկացնելով վարչապետին, իր հրաժարականի մասին գրավոր դիմումը պաշտոնապես ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին .~~

3) նա «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով հրաժարական է տվել.

4) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

5) նրա նկատմամբ կայացվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ.

6) նա մահացել է.

7) նա օրենքով սահմանված կարգով զրկվել է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

3. Հանձնաժողովի անդամի լիազորությունները ~~կարող են դադարեցվել~~Հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով դադարեցվում են, եթե՝

1) նա պաշտոնավարման ընթացքում ձեռք է բերել Հանձնաժողովի անդամի լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդություն.

2) նա երկարատև անաշխատունակության կամ այլ հարգելի պատճառով մեկ տարվա ընթացքում բացակայել է Հանձնաժողովի նիստերի առնվազն կեսից.

3) նա մեկ տարվա ընթացքում ավելի քան երկու անգամ անհարգելի բացակայել է Հանձնաժողովի նիստերից.

4) նա խախտել է Հանձնաժողովի անդամի անհամատեղելիության պահանջները.

5) նա չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել իր պաշտոնեական պարտականությունները.

6) պաշտոնավարման ընթացքում պարզվել է, որ նա նշանակման պահին չի համապատասխանել Հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջներին:

3.1. Հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարում են, եթե նրա՝ որպես Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարել կամ դադարեցվել են:

3.2. Հանձնաժողովի նախագահը կամ սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով նրան փոխարինող Հանձնաժողովի անդամը սույն հոդածի 3-րդ մասով նախատեսված եզրակացությունը դրա ընդունման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է Ազգային ժողովի նախագահին:

3.3. Հանձնաժողովի անդամի լիազորությունները կասեցվում են սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված եզրակացության ընդունման դեպքում:

~~4. Սույն հոդվածով նախատեսված հիմքերի վերաբերյալ Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում՝ սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձը, գրավոր տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին:~~

4. Ազգային ժողովին հրաժարական ներկայացնելիս Հանձնաժողովի անդամն անհապաղ տեղեկացնում է Հանձնաժողովի նախագահին, ինչպես նաև այն մարմնին կամ պաշտոնատար անձին, որի առաջարկությամբ նա նշանակվել է Հանձնաժողովի անդամ: Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված այլ դեպքերում Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարելուց, ինչպես նաև Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանձնաժողովի նախագահը կամ սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով նրան փոխարինող Հանձնաժողովի անդամն այդ մասին տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին, ինչպես նաև այն մարմնին, որն իրավասու է տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրել՝ միաժամանակ ներկայացնելով թեկնածուի համար անհրաժեշտ սույն օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները:

Հոդված 23. Հանձնաժողովի նախագահը

1. Հանձնաժողովի նախագահը՝

ա) իր իրավասության շրջանակներում ներկայացնում է Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում.

բ) ղեկավարում և համակարգում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը, այդ նպատակով Հանձնաժողովի անդամներին և իր կողմից նշանակվող աշխատակիցներին տալիս է հանձնարարականներ, կատարում է աշխատանքային պարտականությունների բաշխում Հանձնաժողովի անդամների միջև.

գ) (կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-257-Ն)

դ) հրավիրում և նախագահում է Հանձնաժողովի նիստերը, հաստատում նիստի օրակարգը.

ե) կազմակերպում է Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարումը.

զ) ստորագրում է Հանձնաժողովի որոշումները~~ և նիստերի արձանագրությունները~~.

է) հաստատում է Հանձնաժողովի աշխատակազմի հաստիքացուցակը, Հանձնաժողովի անդամների և իր կողմից նշանակվող աշխատակիցների համար հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ, իր իրավասությունների սահմաններում աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հանձնաժողովի աշխատակազմի աշխատակիցներին, դատարանում հանդես է գալիս Հանձնաժողովի անունից, տալիս է Հանձնաժողովի անունից հանդես գալու լիազորագրեր, ընդունում է հրամաններ, ներառյալ՝ ստուգում, ուսումնասիրություն (այդ թվում՝ հսկիչ գնում) կամ դիտանցում իրականացնելու վերաբերյալ հրամաններ, իրականացնում է սույն օրենքով, այլ իրավական ակտերով և Հանձնաժողովի կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

~~2. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ նրան փոխարինում է Հանձնաժողովի անդամներից մեկը, իսկ վերջինիս բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու կամ Հանձնաժողովի նախագահի հանձնարարության անհնարինության դեպքում՝ Հանձնաժողովի այն անդամը, որն ավելի երկար է աշխատում այդ պաշտոնում:~~

2. Արձակուրդի կամ գործուղման դեպքում Հանձնաժողովի նախագահը Հանձնաժողովի անդամներից մեկին նշանակում է իրեն փոխարինող: Փոխարինող չնշանակելու, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահի ժամանակավոր անաշխատունակության, լիազորությունների դադարման, դադարեցման կամ կասեցման դեպքերում Հանձնաժողովի նախագահին փոխարինում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

Հոդված 30. Աշխատանքների կազմակերպման կարգը

1. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով:

2. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամներից առնվազն չորսը:

3. Հանձնաժողովը հարցերը քննում է դռնբաց նիստում, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է վնաս հասցնել շահագրգիռ անձանց շահերին:

4. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են համառոտ տեղեկություններ նիստի անցկացման վայրի, ժամանակի, մասնակիցների, օրակարգի, ելույթների և քվեարկության արդյունքների վերաբերյալ: Արձանագրությունը ստորագրում են նիստին ներկա Հանձնաժողովի բոլոր անդամները:

5. Նիստերը գումարվում են որոշակի պարբերականությամբ կամ ըստ անհրաժեշտության՝ Հանձնաժողովի անդամներից որևէ մեկի պահանջով:

6. Քննարկման արդյունքում Հանձնաժողովի կողմից կայացվում է որոշում:

Ընթացակարգային հարցերի քննարկման կամ ըստ էության որոշում չկայացվելու (այդ թվում՝ դռնփակ նիստ գումարելու, հարցը քննարկումից հանելու, քննարկումը հետաձգելու, օրակարգում լրացուցիչ հարց ընդգրկելու, աշխատակազմին հանձնարարություն տալու և այլն) դեպքում Հանձնաժողովի կողմից քվեարկությամբ կայացվում է բանավոր (արձանագրային) որոշում, ինչի մասին նշվում է արձանագրության մեջ:

Հանձնաժողովի նիստերում որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասար բաշխման դեպքում Հանձնաժողովի նախագահի կամ նրան փոխարինող անձի ձայնը որոշիչ է:

Քվեարկությունից ձեռնպահ մնալը կամ ձայնի փոխանցումը մեկ այլ անդամի չի թույլատրվում:

Ծանուցված անձանց չներկայանալը չի խոչընդոտում քննարկման անցկացմանը և որոշումների ընդունմանը:

7. Վարչական ակտի ընդունումից հետո հասցեատիրոջն է հանձնվում դրա պատճենը՝ 5 օրվա ընթացքում:

8. Հանձնաժողովի կողմից ընդունված վարչական ակտն ուժի մեջ է մտնում դրա պատճենը հասցեատիրոջը հանձնելուն հաջորդող օրվանից, եթե այդ ակտով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ: Վարչական ակտի՝ մեկից ավելի հասցեատերերի առկայության դեպքում վարչական ակտը նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ ուժի մեջ է մտնում իր մասով՝ տվյալ վարչական ակտի պատճենը համապատասխան հասցեատիրոջը հանձնելուն հաջորդող օրվանից, եթե այդ ակտով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ:

Հանձնաժողովի կողմից ընդունված մյուս անհատական իրավական ակտերն ուժի մեջ են մտնում ընդունման պահից, եթե դրանցով այլ ժամկետ սահմանված չէ:

9. Հանձնաժողովի ընդունած վարչական ակտը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Հանձնաժողովի ընդունած վարչական ակտը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ Հանձնաժողովի ընդունած վարչական ակտն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

10. Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի իրականացման առավելագույն ժամկետը 90 օր է:

11. Հարուցված վարչական վարույթի իրականացման ժամկետի ընթացքը կարող է կասեցվել տնտեսվարող սուբյեկտի, վերջինիս պաշտոնատար անձի կամ իրավասու այլ աշխատակցի բացակայության պատճառով սույն օրենքով նախատեսված թղթակցությունը հանձնելու անհնարինության, Հանձնաժողով փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելու կամ վարույթի իրականացմանն այլ կերպ խոչընդոտելու կամ վարչական վարույթի իրականացումն անհնար դարձնող այլ հանգամանքների առկայության դեպքում: Վարչական վարույթը վերսկսվում է սույն մասով նախատեսված հանգամանքների վերացումից հետո:

12. Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի ընթացքում սույն օրենքի խախտման փաստ չհայտնաբերվելու կամ վարչական ակտի ընդունումն անհնար դարձնող հանգամանքների առկայության դեպքում Հանձնաժողովի որոշմամբ վարույթը կարճվում է:

13. Հանձնաժողովն ապահովում է իր գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը զանգվածային լրատվամիջոցների, պաշտոնական ինտերնետային կայքի և այլ միջոցներով: Հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է իր ընդունած որոշումները, բացառությամբ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակողների:

4. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունները և լրացումները

Հոդված 34. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 19-րդ, 23-26-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

2. Սույն օրենքի ուժով, որպես ինքնավար մարմին, ~~Հանձնաժողովի~~ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության

պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) առաջին կազմը ձևավորվում է հետևյալ կերպ՝ նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրվանից հետո ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի հունիսի 30-ը, Ազգային ժողովը վարչապետի առաջարկությամբ ~~սույն~~ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով _նշանակում է Հանձնաժողովի ~~նախագահ~~ նախագահին և վեց անդամներին ~~պաշտոնավարման~~ հետևյալ ժամկետներով.

1) Հանձնաժողովի նախագահը՝ 5 տարի.

2) Հանձնաժողովի մեկ անդամը՝ 4 տարի.

3) Հանձնաժողովի երեք անդամը՝ 3 տարի.

4) Հանձնաժողովի մեկ անդամը՝ 2 տարի.

5) Հանձնաժողովի մեկ անդամը՝ 1 տարի:

2.1. Հանձնաժողովի առաջին կազմի անդամների լիազորություններն օրենքով սահմանված կարգով դադարելու կամ դադարեցվելու դեպքում Հանձնաժողովի նախագահի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունի Կառավարությունը, իսկ Հանձնաժողովի մյուս անդամների թափուր պաշտոններում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն հաջորդաբար՝ Կառավարությունը, Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը:

3. ~~Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի~~ Հանձնաժողովի այն անդամները, որոնք նշանակվել են մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելու օրը, շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ օրենքով սահմանված ժամկետի ավարտը, բայց ոչ ավելի, քան սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նշանակումները կատարելը, մասնավորապես՝

1) Հանձնաժողովի գործող նախագահը՝ մինչև Հանձնաժողովի նոր նախագահի նշանակումը.

2) Հանձնաժողովի յուրաքանչյուր նոր անդամի նշանակմամբ դադարում են Հանձնաժողովի գործող վեց անդամից այն անդամի լիազորությունները, որը մյուս անդամներից ավելի շուտ է նշանակվել: Հանձնաժողովի գործող անդամի լիազորությունները դադարում են նաև այն դեպքում, եթե նա սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով նշանակվել է Հանձնաժողովի նախագահ կամ Հանձնաժողովի անդամ:

5. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունները և լրացումները

Հոդված 7. Հանձնաժողովի կազմավորման կարգը և անդամներին ներկայացվող պահանջները

1. Հանձնաժողովը կազմված է հինգ անդամից՝ հանձնաժողովի նախագահ և չորս անդամ: Հանձնաժողովի անդամների պաշտոնները ~~համարվում են քաղաքացիական պաշտոններ~~ ինքնավար պաշտոններ են:

~~2. Սահմանադրության 122-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝ հինգ տարի պաշտոնավարման ժամկետով, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերի: Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոն առաջանալու դեպքում հանձնաժողովի նախագահը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ սույն օրենքի 7.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձը, դիմում է Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ ներկայացնելով տվյալ պաշտոնի թեկնածուի համար անհրաժեշտ՝ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները: Նույն անձը չի կարող ավելի, քան երկու անգամ անընդմեջ պաշտոնավարման ամբողջ ժամկետով նշանակվել հանձնաժողովի անդամ կամ հանձնաժողովի նախագահ:~~

2. Հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակում է Ազգային ժողովը՝ հինգ տարի ժամկետով, բացառությամբ հանձնաժողովի առաջին կազմի անդամների նշանակման, ինչպես նաև սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերի: Նույն անձը չի կարող ավելի, քան երկու անգամ անընդմեջ նշանակվել հանձնաժողովի նախագահ կամ լիազորությունների ամբողջ ժամկետով՝ հանձնաժողովի անդամ:

2.1. Հանձնաժողովի նախագահի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունի Կառավարությունը: Հանձնաժողովի մյուս անդամների թափուր պաշտոններում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն հաջորդաբար՝ Կառավարությունը, Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը:

2.2. Հանձնաժողովի նախագահի կամ անդամի թափուր պաշտոնում թեկնածուն առաջադրվում է հանձնաժողովի նախագահի կամ անդամի լիազորությունները դադարելու մասին սույն օրենքի 7.2-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով տեղեկացվելուց, հանձնաժողովի նախագահի կամ անդամի լիազորությունները դադարեցվելուց, ինչպես նաև հանձնաժողովի նախագահ կամ անդամ նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը չընդունվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Եթե Կառավարությանը կամ Ազգային ժողովի կառավարող խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում

սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա նույն մարմինն այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում: Եթե Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա Ազգային ժողովի կառավարող խմբակցությունն այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում:

2.3. Հանձնաժողովի նախագահի կամ անդամի թափուր պաշտոնում նշանակումը կատարվում է այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Եթե հանձնաժողովի անդամ նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը չի ընդունվում, ապա նույն մարմնի կողմից այդ պաշտնում թեկնածու առաջադրելու իրավունքը պահպանվում է:

~~3. Հանձնաժողովի անդամները նշանակվում են տարեկան ռոտացիայի սկզբունքով՝ յուրաքանչյուր տարի հանձնաժողովի մեկ անդամի նշանակմամբ:~~

4. ~~Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ, առնվազն տասը տարվա աշխատանքի փորձառություն ունեցող (որից առնվազն երեք տարին՝ ստորաբաժանումների համակարգման գործառույթներով օժտված կամ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում) և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:~~ Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք, ով ունի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն երեք տարին՝ քաղաքական, ինքնավար, վարչական կամ օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից):

Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա իրավաբանական, առնվազն մեկը՝ բարձրագույն տնտեսագիտական կրթություն, իսկ մյուսները՝ կարգավորվող ոլորտներից որևէ մեկում՝ սույն մասով նախատեսված ժամկետով աշխատանքային ստաժ: Կարգավորվող ոլորտի ստաժ է համարվում նաև այդ ոլորտում պետական կառավարում կամ կարգավորում իրականացնող մարմիններում կամ այդ ոլորտում սպառողների հետ կապերի գծով աշխատանքային ստաժը:

5. Հանձնաժողովի անդամը պաշտոնավարում է մինչև 65 տարին լրանալը:

6. Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում հանձնաժողովի անդամի նշանակման համար սույն հոդվածով սահմանված ընթացակարգով նշանակվում է հանձնաժողովի նոր անդամ՝ պաշտոնավարման չլրացած ժամկետի մնացած ժամանակահատվածի

համար: Եթե պաշտոնավարման մնացած ժամանակը պակաս է մեկ տարուց, ապա հանձնաժողովի նոր անդամի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի՝ գումարած մնացած ժամանակահատվածը:

7. Այն դեպքում, երբ հանձնաժողովի նախագահ է նշանակվում հանձնաժողովի անդամներից մեկը, ապա նա պաշտոնավարում է մինչև իր՝ որպես հանձնաժողովի անդամի պաշտոնավարման ժամկետի ավարտը: Եթե պաշտոնավարման մնացած ժամանակը պակաս է մեկ տարուց, ապա հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի՝ գումարած մնացած ժամանակահատվածը:

8. Հանձնաժողովի անդամ չի կարող նշանակվել այն անձը, որը դատապարտվել է հանցագործության կատարման համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքերով, որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, ունի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկով նախատեսված դատավորի նշանակմանը խոչընդոտող հիվանդություն:

Հոդված 7.1. Հանձնաժողովի նախագահը և անդամները

1. Հանձնաժողովի նախագահը՝

ա) համակարգում և ապահովում է հանձնաժողովի բնականոն աշխատանքը.

բ) հրավիրում և նախագահում է հանձնաժողովի նիստերը, ստորագրում է հանձնաժողովի ~~որոշումներն ու նիստերի արձանագրությունները~~ որոշումները.

գ) իր լիազորությունների շրջանակում ընդունում է հրամաններ, հանձնաժողովի անունից ստորագրում է պաշտոնական փաստաթղթեր, տալիս լիազորագրեր և կնքում պայմանագրեր.

դ) իր իրավասությունների սահմաններում ներկայացնում է հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում, առանց լիազորագրի հանդես է գալիս հանձնաժողովի անունից:

~~2. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա հանձնարարությամբ փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը, իսկ նման հանձնարարականի անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի այն անդամը, որն ավելի երկար է աշխատում այդ պաշտոնում~~:

2. Արձակուրդի կամ գործուղման դեպքում հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներից մեկին նշանակում է իրեն փոխարինող: Փոխարինող չնշանակելու, հանձնաժողովի նախագահի ժամանակավոր անաշխատունակության, լիազորությունների դադարման, դադարեցման կամ կասեցման դեպքերում

հանձնաժողովի նախագահին փոխարինում է հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

3. Հանձնաժողովի անդամն իրեն վերապահված լիազորությունների սահմաններում հանձնաժողովի անունից ստորագրում է պաշտոնական փաստաթղթեր, ~~նշագրում հանձնաժողովի որոշումներ~~ հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և այլ փաստաթղթեր:

4. Հանձնաժողովի անդամների միջև լիազորությունների և աշխատանքային պարտականությունների բաշխման հետ կապված հարցերը կարգավորվում են հանձնաժողովի որոշմամբ:

Հոդված 7.2. Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարումը ~~և դադարեցումը~~, դադարեցումը և կասեցումը

~~1. Հանձնաժողովի անդամի լիազորությունների ժամկետը լրանում է նրա նշանակման օրվան հաջորդող հինգերորդ տարվա նույն օրը, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերի:~~

2. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են, եթե՝

ա) լրացել է նրա պաշտոնավարման ~~առավելագույն~~ տարիքը.

ա.1) ավարտվել է նրա լիազորությունների ժամկետը.

բ) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն.

~~գ) նա, նախապես տեղեկացնելով վարչապետին, իր հրաժարականի մասին գրավոր դիմումը պաշտոնապես ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին.~~

գ) նա «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով հրաժարական է տվել.

դ) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

ե) նրա նկատմամբ կայացվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ, կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով.

զ) նա մահացել է:

3. Հանձնաժողովի անդամի լիազորությունները ~~կարող են դադարեցվել~~հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով դադարեցվում են, եթե՝

ա) նա պաշտոնավարման ընթացքում ձեռք է բերել հանձնաժողովի անդամի լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդություն.

բ) նա երկարատև անաշխատունակության կամ այլ հարգելի պատճառով մեկ տարվա ընթացքում բացակայել է հանձնաժողովի նիստերի առնվազն կեսից.

գ) նա մեկ տարվա ընթացքում ավելի, քան երկու անգամ անհարգելի բացակայել է հանձնաժողովի նիստերից.

դ) նա խախտել է հանձնաժողովի անդամի անհամատեղելիության պահանջները.

ե) նա խախտել է քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը.

զ) ի հայտ են եկել փաստեր, որ նա նշանակման պահին չի համապատասխանել ներկայացվող պահանջներին:

3.1. Հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարում են, եթե նրա՝ որպես հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարել կամ դադարեցվել են:

3.2. Հանձնաժողովի նախագահը կամ սույն օրենքի 7.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով նրան փոխարինող հանձնաժողովի անդամը սույն հոդածի 3-րդ մասով նախատեսված եզրակացությունը դրա ընդունման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է Ազգային ժողովի նախագահին:

3.3. Հանձնաժողովի անդամի լիազորությունները կասեցվում են սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված եզրակացության ընդունման դեպքում:

~~4. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում հանձնաժողովի նախագահը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ սույն օրենքի 7.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձը, գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին:~~

4. Ազգային ժողովին հրաժարական ներկայացնելիս հանձնաժողովի անդամն անհապաղ տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին, ինչպես նաև այն մարմնին կամ պաշտոնատար անձին, որի առաջարկությամբ նա նշանակվել է հանձնաժողովի անդամ: Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված այլ դեպքերում հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարելուց, ինչպես նաև հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, հանձնաժողովի նախագահը կամ սույն օրենքի 7.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով նրան փոխարինող հանձնաժողովի անդամն այդ մասին տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին, ինչպես նաև այն մարմնին, որն իրավասու է տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրել՝ միաժամանակ ներկայացնելով թեկնածուի համար անհրաժեշտ սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները:

Հոդված 11. Հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգումը

1. Հանձնաժողովն օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում ընդունում է որոշումներ, որոնք իրենց բնույթով կարող են լինել ենթաօրենսդրական նորմատիվ, անհատական կամ ներքին (լոկալ) իրավական ակտեր:

2. Հանձնաժողովի նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ քննարկվում են պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող կամ հանձնաժողովի ներքին կանոնակարգային հարցեր:

3. Հանձնաժողովի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են ամիսը մեկ: Հանձնաժողովը, ըստ անհրաժեշտության, կարող է անցկացնել նաև արտահերթ նիստեր: Հանձնաժողովի հերթական և արտահերթ նիստ հրավիրելու և անցկացնելու կարգը սահմանում է հանձնաժողովը:

4. Հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված առանձին հարցեր կարող են նշվել որպես քննարկման ոչ ենթակա հարցեր, եթե դրանք ունեն տեխնիկական կամ ներքին կանոնակարգային բնույթ: Եթե քննարկման ոչ ենթակա հարցի մասին հայտարարելուց հետո այդ հարցի վերաբերյալ ներկայացվում է առարկություն կամ առաջարկություն, ապա այն պետք է քննարկվի և ընդունվի սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

5. Հանձնաժողովը, իր սահմանած կարգի համաձայն, հայտարարում է հանձնաժողովի նիստերի անցկացման վայրը, օրը և ժամը, հնարավորություն է ընձեռում շահագրգիռ անձանց ու հասարակության ներկայացուցիչներին մասնակցելու նիստերին՝ հաշվի առնելով իր վարչական շենքի հնարավորությունները, ստանալու օրակարգը և քննարկվող նյութերը, ներկայացնելու տեղեկություններ և հանդես գալու ելույթներով:

6. Եթե հանձնաժողովի նիստում քննարկվում են սպառողների համար սակագների հաշվարկման մեթոդիկաները, բնագավառների (համակարգերի) կառուցվածքին, սպառողների սպասարկման որակին և պայմաններին վերաբերող հարցեր, ապա հանձնաժողովն այդ մասին ողջամիտ ժամկետում իրազեկում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, կարգավորվող ոլորտի իրավասու պետական մարմնին և սպառողների շահերը պաշտպանող կազմակերպություններին՝ հնարավորություն ընձեռելով նրանց ներկայացուցիչներին մասնակցելու նիստերին, հանդես գալու ելույթներով և առաջարկություններով:

7. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի առնվազն երեք անդամ, և այն վարում է հանձնաժողովի նախագահը կամ սույն օրենքի 7.1-ին հոդվածի 2-րդ ~~մասի համաձայն՝ հանձնաժողովի նախագահի պաշտոնեական պարտականությունները կատարող հանձնաժողովի անդամը~~ մասով սահմանված կարգով նրան փոխարինող հանձնաժողովի անդամը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ: Որոշումն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

7.1. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են համառոտ տեղեկություններ նիստի անցկացման վայրի, ժամանակի, մասնակիցների, օրակարգի, ելույթների և քվեարկության արդյունքների

վերաբերյալ: Արձանագրությունը ստորագրում են նիստին ներկա հանձնաժողովի բոլոր անդամները:

8. Հանձնաժողովի կառուցվածքը, հանձնաժողով դիմումներ ներկայացնելու ու քննարկելու, նիստեր կազմակերպելու և անցկացնելու կարգը, ինչպես նաև հանձնաժողովի լիազորությունների իրականացմանն առնչվող ներքին կանոնակարգային այլ հարցեր կարգավորվում են հանձնաժողովի որոշումներով:

9. Հանձնաժողովն օրենքով նախատեսված դեպքերում ունի կարգավորվող անձանցից տեղեկություններ պահանջելու և իր ներկայացուցիչների միջոցով կարգավորվող անձանց տարածք մուտք գործելու իրավունք:

10. Հանձնաժողովն իր աշխատանքներում իրավասու է վճարովի հիմունքներով ներգրավելու անկախ փորձագետների:

11. ~~Հանձնաժողովն ապահովում է իր և իր կողմից կարգավորվող գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը զանգվածային լրատվամիջոցների, ինտերնետային էջի և այլ միջոցներով:~~

11. Հանձնաժողովն ապահովում է իր և իր կողմից կարգավորվող գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը զանգվածային լրատվամիջոցների, պաշտոնական ինտերնետային կայքի և այլ միջոցներով: Հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է իր ընդունած որոշումները, բացառությամբ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակողների:

6. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունները և լրացումները

Հոդված 7. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 7-րդ հոդվածի, ինչպես նաև սույն օրենքի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող 7.2-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում Հանրապետության նորընտիր նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

2. Սույն օրենքի ուժով, որպես ինքնավար մարմին, ~~հանձնաժողովի~~ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) առաջին կազմը ձևավորվում է հետևյալ կերպ՝ Հանրապետության նորընտիր նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրվանից հետո ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի հունիսի 30-ը, ~~Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը Հայաստանի Հանրապետության վարչապետի~~ Ազգային ժողովը վարչապետի առաջարկությամբ ~~սույն~~ «Ազգային ժողովի

կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակում է ~~հանձնաժողովի~~Հանձնաժողովի նախագահին և չորս անդամներին ~~պաշտոնավարման~~ հետևյալ ժամկետներով՝

1) ~~հանձնաժողովի~~ Հանձնաժողովի նախագահ՝ 5 տարի.

2) ~~հանձնաժողովի~~ Հանձնաժողովի անդամ՝ 4 տարի.

3) ~~հանձնաժողովի~~ Հանձնաժողովի անդամ՝ 3 տարի.

4) ~~հանձնաժողովի~~ Հանձնաժողովի անդամ՝ 2 տարի.

5) ~~հանձնաժողովի~~ Հանձնաժողովի անդամ՝ 1 տարի:

2.1. Հանձնաժողովի առաջին կազմի անդամների լիազորություններն օրենքով սահմանված կարգով դադարելու կամ դադարեցվելու դեպքում Հանձնաժողովի նախագահի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունի Կառավարությունը, իսկ Հանձնաժողովի մյուս անդամների թափուր պաշտոններում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն հաջորդաբար՝ Կառավարությունը, Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը:

3. ~~Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի~~ Հանձնաժողովի այն անդամները, որոնք նշանակվել են մինչև Հանրապետության նորընտիր նախագահի կողմից իր պաշտոնը ստանձնելու օրը, շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ օրենքով սահմանված ժամկետի ավարտը, բայց ոչ ավելի, քան սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նշանակումները կատարելը, մասնավորապես՝

1) ~~հանձնաժողովի~~Հանձնաժողովի գործող նախագահը՝ մինչև ~~հանձնաժողովի~~Հանձնաժողովի նոր նախագահի նշանակումը.

2) ~~հանձնաժողովի~~Հանձնաժողովի յուրաքանչյուր նոր անդամի նշանակմամբ դադարում են ~~հանձնաժողովի~~Հանձնաժողովի գործող չորս անդամներից այն անդամի լիազորությունները, որը մյուս անդամներից ավելի շուտ է նշանակվել: Հանձնաժողովի գործող անդամի լիազորությունները դադարում են նաև այն դեպքում, եթե նա սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով նշանակվել է հանձնաժողովի նախագահ կամ հանձնաժողովի անդամ:

7. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունները և լրացումները

~~**Հոդված 9. Հանձնաժողովի կազմավորման կարգը**~~

~~1. Հանձնաժողովը կազմված է հինգ անդամից:~~

~~2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 122-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հանձնաժողովի անդամներին «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և սույն~~

~~օրենքի 12-15-րդ հոդվածներով սահմանված կարգով նշանակում է Ազգային ժողովը՝ վեց տարի ժամկետով:~~

Հոդված 9. Հանձնաժողովի կազմավորման կարգը

1. Հանձնաժողովը կազմված է հինգ անդամից՝ նախագահ և չորս անդամ: Հանձնաժողովի անդամների պաշտոնները ինքնավար պաշտոններ են:

2. Հանձնաժողովի անդամներին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակում է Ազգային ժողովը՝ վեց տարի ժամկետով, բացառությամբ Հանձնաժողովի առաջին կազմի անդամների նշանակման դեպքերի:

3. Հանձնաժողովն իր կազմից՝ Հանձնաժողովի անդամի լիազորությունների ժամկետով, ընտրում է Հանձնաժողովի նախագահ:

4. Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունի այն մարմինը, որին վերապահվել է Հանձնաժողովի առաջին կազմի տվյալ անդամի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքի:

5. Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուն առաջադրվում է Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարելու մասին սույն օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով տեղեկացվելուց, Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվելուց, ինչպես նաև Հանձնաժողովի անդամ նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը չընդունվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

6. Եթե Կառավարությանը, Ազգային ժողովի կառավարող խմբակցությանը կամ Բարձրագույն դատական խորհրդին վերապահված Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա նույն մարմինն այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում:

7. Եթե Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությանը վերապահված Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա Ազգային ժողովի կառավարող խմբակցությունն այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում:

8. Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում նշանակումը կատարվում է այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Եթե Հանձնաժողովի անդամ նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը չի ընդունվում, ապա նույն մարմնի կողմից այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը պահպանվում է:

~~**Հոդված 10. Հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջները**~~

~~1. Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր ոք, ով ունի բարձրագույն կրթություն, առնվազն տասը տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ և ճանաչում:~~

~~2. Հանձնաժողովն իր կազմից ընտրում է Հանձնաժողովի նախագահ՝ անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:~~

~~3. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Հանձնաժողովի անդամ:~~

~~4. Հանձնաժողովի անդամ չի կարող նշանակվել այն անձը, որը դատապարտվել է հանցագործության կատարման համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքերով, որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, ունի Կառավարության սահմանած ցանկով նախատեսված՝ դատավորի նշանակմանը խոչընդոտող հիվանդություն:~~

~~5. Հանձնաժողովի անդամների պաշտոնները համարվում են քաղաքացիական պաշտոններ:~~

Հոդված 10. Հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջները

1. Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք, ով ունի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն երեք տարին՝ քաղաքական, ինքնավար, վարչական կամ օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից):

2. Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա բարձրագույն իրավաբանական, առնվազն մեկը՝ բարձրագույն տնտեսագիտական կրթություն:

3. Հանձնաժողովի անդամ չի կարող նշանակվել այն անձը, որը դատապարտվել է հանցագործության կատարման համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքերով, որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, որն ունի Կառավարության սահմանած ցանկով նախատեսված՝ դատավորի նշանակմանը խոչընդոտող հիվանդություն:

4. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Հանձնաժողովի անդամ:

~~1.~~5. Հանձնաժողովի անդամը պաշտոնավարում է մինչև 65 տարին լրանալը:

~~Հոդված 11. Մրցութային խորհրդի ձևավորման կարգը~~

~~1. Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար Ազգային ժողովի նախագահը ձևավորում է մրցութային խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ):~~

~~2. Խորհուրդը կազմված է Սահմանադրական դատարանի նախագահի, Մարդու իրավունքների պաշտպանի, Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների, Հանրային խորհրդի և Փաստաբանների պալատի կողմից նշանակված մեկական անդամներից: Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների կողմից Խորհրդի անդամը նշանակվում է համախոհությամբ (կոնսենսուսով):~~

~~3. Խորհրդի կազմում ընդգրկվելու համար Ազգային ժողովի նախագահը դիմում է Սահմանադրական դատարանի նախագահին, Մարդու իրավունքների պաշտպանին, Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցություններին, Հանրային խորհրդին և Փաստաբանների պալատին՝ յուրաքանչյուրի կողմից մեկական թեկնածու առաջադրելու համար: Հանրային խորհուրդը թեկնածու է առաջադրում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից:~~

~~4. Խորհրդի անհատական կազմը հաստատում է Ազգային ժողովի նախագահը, և այն հրապարակվում է Ազգային ժողովի պաշտոնական կայքէջում:~~

~~Հոդված 12. Խորհրդի գործառույթները և գործունեության կազմակերպումը~~

~~1. Խորհուրդը՝~~

~~1) կազմակերպում և անցկացնում է Հանձնաժողովի անդամի թեկնածուի ընտրության մրցույթ (մրցույթ կամ նոր մրցույթ).~~

~~2) սահմանում է՝~~

~~ա. Հանձնաժողովի անդամի թեկնածուին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը,~~

~~բ. առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների,~~

~~գ. գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները,~~

դ. չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում,

ե. գնահատման և միավորների հաշվարկման կարգը.

3) համադրում է Հանձնաժողովի անդամի թեկնածուի համապատասխանությունը սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի պահանջներին.

4) լուծում է գնահատման գործընթացի հետ կապված այլ հարցեր.

5) կազմում և Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը՝ դրանում ներառելով Հանձնաժողովի անդամների թափուր պաշտոնների քանակին հավասար թվով հաղթողներ՝ յուրաքանչյուր թափուր պաշտոնի համար մեկ թեկնածու սկզբունքով.

6) մրցույթի կազմակերպմանն ու անցկացմանը վերաբերող հարցերի կապակցությամբ ընդունում է որոշումներ, այդ թվում՝ ներկայացված փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիությունը պարզելու, ինչպես նաև հավելյալ տեղեկություններ ստանալու վերաբերյալ:

2. Խորհրդի նիստն իրավազոր է Խորհրդի առնվազն չորս անդամի մասնակցության դեպքում: Նիստը վարում է Խորհրդի՝ նիստին մասնակցող տարիքով ավագ անդամը:

3. Խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդն իր նիստերը հրավիրում է Ազգային ժողովի նստավայրում:

4. Խորհրդի նիստերն արձանագրվում են:

Հոդված 13. Մրցույթի անցկացումը

1. Ազգային ժողովի նախագահն Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով (սույն հոդվածում այսուհետ՝ աշխատակազմ) մրցույթը հայտարարում է Հանձնաժողովի անդամի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան 90, և ոչ ուշ, քան 50 օր առաջ, իսկ նրա պաշտոնը թափուր մնալու դեպքում՝ 30 օրվա ընթացքում:

2. Հայտարարությունը հրապարակվում է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով, ինչպես նաև

~~Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների, Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքերում (այսուհետ՝ պաշտոնական կայքեր):~~

~~3. Հայտարարությունը պետք է պարունակի առնվազն հետևյալ տվյալները.~~

~~1) թեկնածուներին ներկայացվող պահանջները.~~

~~2) մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.~~

~~3) մրցույթի անցկացման պայմանները, այդ թվում՝ թեստի նմուշը, թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում, գնահատման և միավորների հաշվարկման կարգը.~~

~~4) փաստաթղթերը ներկայացնելու ժամկետը և վայրը:~~

~~4. Մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող անձը (այսուհետ՝ հավակնորդ) հայտարարության հրապարակմանը հաջորդող 20 օրվա ընթացքում աշխատակազմ է ներկայացնում մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր), ինչպես նաև իր բնակության և էլեկտրոնային փոստի հասցեները:~~

~~5. Փաստաթղթերը կարող են հանձնվել առձեռն կամ ուղարկվել փոստով:~~

~~6. Փաստաթղթերն ընդունելու նպատակով աշխատակազմում վարվում է համապատասխան գրանցամատյան:~~

~~7. Փոստով ուղարկված փաստաթղթերը համարվում են սահմանված ժամկետում ներկայացված, եթե աշխատակազմը դրանք ստացել է մինչև սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետը լրանալը:~~

~~8. Փոստով ուղարկված փաստաթղթերի ստացման վերաբերյալ հավակնորդը ծանուցվում է փաստաթղթերն ստանալուն հաջորդող մեկ օրվա ընթացքում՝ իր ներկայացրած էլեկտրոնային փոստի հասցեով:~~

~~9. Փաստաթղթերի թերությունները հավակնորդը կարող է վերացնել փաստաթղթերը ներկայացնելու համար սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետը լրանալուն հաջորդող երեք օրվա ընթացքում:~~

~~10. Մրցույթն անցկացվում է երեք փուլով, որոնցից առաջինը փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգման (այսուհետ՝ փաստաթղթային ստուգման) փուլն է, երկրորդը՝ թեստավորման, իսկ երրորդը՝ հարցազրույցի:~~

~~11. Մրցույթի փաստաթղթային ստուգման փուլում Խորհուրդը ստուգում է փաստաթղթերի ամբողջականությունը, դրանց համապատասխանությունն անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին, իսկ ողջամիտ կասկածի դեպքում՝ նաև փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիությունը: Հավակնորդի ներկայացրած փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիությունը Խորհրդի որոշման հիման վրա պարզվում է աշխատակազմի միջոցով: Խորհրդի որոշման հիման վրա աշխատակազմի միջոցով ստացվում են նաև թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատմանը վերաբերող հավելյալ տեղեկություններ: Խորհրդի տեղեկացմամբ հավակնորդը կարող է մասնակցել փաստաթղթային ստուգման փուլին:~~

~~12. Փաստաթղթերի թերի լինելու կամ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու դեպքում հավակնորդին այդ մասին ծանուցում է աշխատակազմը մեկ օրվա ընթացքում՝ իր ներկայացրած էլեկտրոնային փոստի հասցեով:~~

~~13. Սույն հոդվածի 11-րդ մասում նշված գործողությունների արդյունքներով՝ Խորհուրդը կազմում է մրցույթի թեստավորման փուլ անցած անձանց (այսուհետ՝ թեստավորման մասնակիցներ) ցուցակը, որի մասին վերջիններս ծանուցվում են ցուցակը կազմելուն հաջորդող մեկ օրվա ընթացքում՝ իրենց ներկայացրած էլեկտրոնային փոստի հասցեներով:~~

~~14. Խորհուրդը թեստավորման մասնակիցների ցուցակը, ինչպես նաև թեստավորման անցկացման օրը, ժամը և վայրը հրապարակում է պաշտոնական կայքում:~~

~~15. Թեստերը կազմում է Խորհուրդը: Թեստերում ընդգրկված հարցերի բնագավառների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև թեստերի նմուշը ոչ ուշ, քան թեստավորումից տասն օր առաջ հրապարակվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:~~

~~16. Յուրաքանչյուր թեստ բաղկացած է 100 հարցից, որոնց լուծման համար թեստավորման մասնակցին տրվում է երկու ժամ:~~

~~17. Թեստավորումն անցկացվում է թեստավորման մասնակիցների համար ծածկագրի կիրառմամբ՝ գաղտնիությունն ապահովելու նպատակով:~~

~~18. Թեստավորման առաջադրանքները բաղկացած են հարցերից, որոնք ունեն ենթադրյալ պատասխաններ: Թեստավորման յուրաքանչյուր հարց կարող է ունենալ մեկ կամ մեկից ավելի ճիշտ պատասխան:~~

~~19. Թեստավորման արդյունքում յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր: Եթե հարցն ունի մեկից ավելի ճիշտ պատասխան, ապա հարցի պատասխանը գնահատվում է ճիշտ միայն այն դեպքում, եթե թեստավորման մասնակիցը նշել է բոլոր ճիշտ պատասխանները: Սխալ պատասխաններ են համարվում ոչ ճիշտ պատասխանի նշումը, որևէ պատասխան չնշելը կամ ոչ բոլոր ճիշտ պատասխանները նշելը:~~

~~20. Թեստավորման փուլի արդյունքների մասին թեստավորման մասնակիցը տեղեկացվում է ոչ ուշ, քան թեստավորման փուլի ավարտին հաջորդող երեք ժամվա ընթացքում:~~

~~21. Թեստավորման մասնակիցը թեստավորման արդյունքները կարող է գրավոր բողոքարկել Խորհրդին՝ արդյունքներն ստանալուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում: Բողոքարկման վերաբերյալ պատասխանը տրվում է նույն օրը: Խորհուրդն իրավունք չունի իջեցնելու թեստավորման մասնակցի գնահատականը:~~

~~22. Եթե Խորհուրդը պարզում է, որ թեստավորման արդյունքների հաշվարկման ժամանակ թույլ տրված հավանական սխալի վերաբերյալ թեստավորման մասնակցի բողոքը հիմնավոր է, ապա բավարարում է թեստավորման մասնակցի պահանջը՝ կատարելով թեստավորման արդյունքների ճիշտ հաշվարկ:~~

~~23. Եթե Խորհուրդը որոշում է բավարարել թեստավորման մասնակցի բողոքը և սխալ է համարում որևէ հարց կամ ենթադրյալ պատասխանը, ապա այդ որոշման հիման վրա տվյալ հարցի համար զրո միավոր ստացած թեստավորման բոլոր մասնակիցների միավորներն ավելացվում են մեկ միավորով, եթե նրանց կատարած սխալը պայմանավորված էր տվյալ սխալ հարցով կամ ենթադրյալ պատասխանով:~~

~~24. Հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում թեստավորման առաջադրանքների առնվազն իններորդ տոկոսին (իններորդ հարցին) ճիշտ պատասխանած թեստավորման մասնակիցները:~~

~~25. Բողոքարկման արդյունքներն ամփոփելուց, ինչպես նաև բողոք չլինելու դեպքում բողոքարկման նախատեսված ժամկետի ավարտից անմիջապես հետո Խորհուրդը կազմում է մրցույթի հարցազրույցի փուլ անցած անձանց (այսուհետ՝ հարցազրույցի մասնակիցներ) ցուցակը, որի մասին թեստավորման մասնակիցները ծանուցվում են ցուցակը կազմելուն հաջորդող մեկ օրվա ընթացքում՝ իրենց ներկայացրած էլեկտրոնային փոստի հասցեներով:~~

~~26. Խորհուրդը հարցազրույցի մասնակիցների ցուցակը, ինչպես նաև հարցազրույցի անցկացման օրը, ժամը և վայրը հրապարակում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:~~

~~27. Հարցազրույցի փուլում Խորհրդի նիստին ներկա յուրաքանչյուր անդամ, Խորհրդի հաստատած չափանիշներին և կարգերին համապատասխան, գնահատում է հարցազրույցի մասնակիցներից յուրաքանչյուրին:~~

~~28. Մրցույթի հարցազրույցի փուլին կարող են ներկա լինել զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ Խորհրդի սահմանած կարգին համապատասխան:~~

~~29. Հարցազրույցի փուլի գնահատման արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավորներ ստացած հարցազրույցի մասնակիցը (մասնակիցները) ընդգրկվում է (են) մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակում (այսուհետ՝ ցուցակ):~~

~~30. Յուրաքանչյուր հարցազրույցի մասնակցի գնահատման և (կամ) Խորհրդում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն:~~

~~31. Խորհուրդը ցուցակը կազմելուն հաջորդող օրը Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է թեկնածուների ցուցակը:~~

~~32. Մրցույթի յուրաքանչյուր մասնակից կարող է ծանոթանալ մրցույթի անցկացման ընթացքում ձեռք բերված կամ կազմված՝ իրեն վերաբերող փաստաթղթերին:~~

~~Հոդված 14. Մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը Ազգային ժողովի նախագահին ներկայացնելը~~

~~1. Խորհուրդը ցուցակը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին ցուցակի հրապարակմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:~~

~~2. Ցուցակին կից ներկայացվում են Խորհրդի նիստերի արձանագրությունները, մրցույթի ընթացքում ներկայացված և ձեռք բերված փաստաթղթերը:~~

~~Հոդված 15. Նոր մրցույթի անցկացումը~~

~~1. Նոր մրցույթ հայտարարվում է, եթե՝~~

~~1) Ազգային ժողովը չի նշանակում թեկնածուին.~~

~~2) հավակնորդների, թեկնածուների թիվը պակաս է թափուր տեղերի քանակից.~~

~~3) առկա են թեկնածուների ընտրությունն իրականացնելու անհնարինության այլ դեպքեր:~~

~~2. Խորհուրդը նոր մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքի մասին տեղեկանալու օրվան հաջորդող 20 օրվա ընթացքում:~~

~~3. Նոր մրցույթն անցկացվում է ընդհանուր կարգով:~~

Հոդված 18. Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարումը~~ և դադարեցումը~~, դադարեցումը և կասեցումը

~~1. Հանձնաժողովի անդամի լիազորությունների ժամկետը լրանում է նրա նշանակման օրվան հաջորդող վեցերորդ տարվա նույն օրը, բացառությամբ Հանձնաժողովի առաջին կազմի՝ չորս տարի ժամկետով նշանակված անդամների, որոնց լիազորությունների ժամկետը լրանում է նրանց նշանակման օրվան հաջորդող չորրորդ տարվա նույն օրը:~~

2. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են, եթե՝

~~1) նա հրաժարականի մասին գրավոր դիմումը պաշտոնապես ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին.~~

1) ավարտվել է նրա լիազորությունների ժամկետը.

1.1) լրացել է նրա պաշտոնավարման տարիքը.

1.2) նա «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով հրաժարական է տվել.

1.3) նա օրենքով սահմանված կարգով զրկվել է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

2) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն.

3) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած.

4) նրա նկատմամբ կայացվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ, կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով.

5) նա մահացել է:

~~3. Հանձնաժողովի անդամի լիազորությունները համարվում են վաղաժամկետ դադարած՝ Ազգային ժողովի նախագահի կողմից փաստն արձանագրելու և այդ մասին հայտարարությամբ հանդես գալու պահից:~~

4. Հանձնաժողովի անդամի լիազորությունները ~~վաղաժամկետ դադարեցնում է Հանձնաժողովը~~Հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով դադարեցվում են, եթե՝

1) նա պաշտոնավարման ընթացքում ձեռք է բերել Հանձնաժողովի անդամի լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդություն.

2) նա երկարատև անաշխատունակության կամ այլ հարգելի պատճառով մեկ տարվա ընթացքում բացակայել է Հանձնաժողովի նիստերի առնվազն կեսից.

3) նա մեկ տարվա ընթացքում ավելի քան երկու անգամ անհարգելի բացակայել է Հանձնաժողովի նիստերից.

4) նա խախտել է Հանձնաժողովի անդամի անհամատեղելիության պահանջները.

5) նա խախտել է քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը.

6) ի հայտ են եկել փաստեր, որ նա նշանակման պահին չի համապատասխանել ներկայացվող պահանջներին:

4.1. Հանձնաժողովի նախագահը կամ սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով նրան փոխարինող Հանձնաժողովի անդամը սույն հոդածի 4-րդ մասով նախատեսված եզրակացությունը դրա ընդունման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է Ազգային ժողովի նախագահին:

4.2. Հանձնաժողովի անդամի լիազորությունները կասեցվում են սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված եզրակացության ընդունման դեպքում:

~~5. Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում օրենքով սահմանված կարգով նշանակվում է Հանձնաժողովի նոր անդամ:~~

5. Ազգային ժողովին հրաժարական ներկայացնելիս Հանձնաժողովի անդամն անհապաղ տեղեկացնում է Հանձնաժողովի նախագահին, ինչպես նաև այն մարմնին, որի առաջարկությամբ նա նշանակվել է Հանձնաժողովի անդամ: Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված այլ դեպքերում Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարելուց, ինչպես նաև Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանձնաժողովի նախագահը կամ սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով նրան փոխարինող Հանձնաժողովի անդամն այդ մասին տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին, ինչպես նաև այն մարմնին, որն իրավասու է տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրել՝ միաժամանակ ներկայացնելով թեկնածուի համար անհրաժեշտ սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Հոդված 18.1. Հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարումը և դադարեցումը

1. Հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարում են, եթե՝

1) նրա՝ որպես Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարել կամ դադարեցվել են.

2) նա՝ Հանձնաժողովի նախագահի պաշտոնից հրաժարական է տվել:

2. Հանձնաժողովի նախագահի կողմից իր պարտականությունները չկատարելը հիմք է Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ նրա որպես Հանձնաժողովի նախագահ լիազորությունները դադարեցնելու համար:

Հոդված 21. Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման կարգը

1. Հանձնաժողովի աշխատանքներն իրականացվում են նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերը վարում է Հանձնաժողովի նախագահը կամ սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով նրան փոխարինող Հանձնաժողովի անդամը:

2. Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ: Հանձնաժողովի նիստը հրավիրում է Հանձնաժողովի նախագահը՝ իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի առնվազն երկու անդամի պահանջով: Հանձնաժողովի աշխատակարգը սահմանում է Հանձնաժողովը:

3. Հանձնաժողովի նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է վնաս պատճառել պետական անվտանգությանը, անձնական կյանքին կամ

օրենքով պաշտպանվող այլ իրավաչափ շահերի: Դռնփակ նիստն անցկացվում է Հանձնաժողովի պատճառաբանված որոշմամբ:

4. Նիստերի անցկացման վայրի, օրվա, ժամի, քննարկման ենթակա հարցերի մասին հայտարարում է Հանձնաժողովը՝ աշխատակարգին համապատասխան: Հանձնաժողովի նիստերին հրավիրվում են շահագրգիռ անձինք:

5. Նիստն իրավազոր է, եթե դրան ներկա է Հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

6. Նիստի օրակարգը հրապարակում է նիստը վարողը և առաջարկում է օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման հաջորդականությունը: Նիստի օրակարգը և նյութերը նախապես տրամադրվում են Հանձնաժողովի անդամներին:

7. Նիստի օրակարգը հաստատում է Հանձնաժողովը՝ քվեարկությամբ:

8. Նիստի օրակարգում լրացուցիչ հարց կարող է ընդգրկվել, կամ հարցը կարող է հանվել նիստի օրակարգից, կամ դրա քննարկումը կարող է հետաձգվել նիստը վարողի կամ Հանձնաժողովի անդամի առաջարկությամբ՝ Հանձնաժողովի որոշմամբ:

9. Նիստին հրավիրված անձինք նիստը վարողի թույլտվությամբ մասնակցում են համապատասխան հարցի քննարկմանը:

10. Նիստը նշանակված օրը չավարտվելու դեպքում շարունակվում է վարողի սահմանած այլ ժամկետում:

11. Հանձնաժողովը քննարկվող հարցի վերաբերյալ ընդունում է որոշում կամ եզրակացություն:

12. Էթիկայի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտումների, իրավիճակային շահերի բախման հարցերով, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մարմիններում ստեղծված էթիկայի հանձնաժողովների (այսուհետ՝ համապատասխան մարմինների էթիկայի հանձնաժողովներ) եզրակացությունների վերանայման արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություններ:

Հանձնաժողովի իրավասությանը վերապահված այլ հարցերով Հանձնաժողովն ընդունում է որոշումներ:

13. Հանձնաժողովի եզրակացություններն ու որոշումներն ընդունվում են Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

14. Բանավոր որոշման մասին նշվում է նիստի արձանագրության մեջ:

15. Օրենքով սահմանված դեպքերում Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունվում են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

16. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է անձամբ՝ տվյալ որոշմանը կամ եզրակացությանը կողմ կամ դեմ: Քվեարկությանը չի մասնակցում Հանձնաժողովի այն անդամը, որին վերաբերում է քննարկվող հարցը:

17. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են համառոտ տեղեկություններ նիստի անցկացման վայրի, ժամանակի, մասնակիցների, օրակարգի, ելույթների և քվեարկության արդյունքների վերաբերյալ: Արձանագրությունը ստորագրում են նիստին ներկա Հանձնաժողովի բոլոր անդամները:

18. Հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները դրանց ընդունման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում են Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում՝ ~~«Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների պահպանմամբ~~, բացառությամբ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակողների:

19. Հանձնաժողովի նախագահը «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 153-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև 157-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված եզրակացությունները դրանց ընդունման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է Ազգային ժողովի նախագահին:

Հոդված 22. Հանձնաժողովի նախագահը և անդամները

1. Հանձնաժողովի նախագահը՝

1) համակարգում է Հանձնաժողովի գործունեությունը և կազմակերպում նրա բնականոն աշխատանքը.

2) հրավիրում և վարում է Հանձնաժողովի նիստերը, ստորագրում է Հանձնաժողովի ~~որոշումները, եզրակացություններն ու նիստերի արձանագրությունները~~ որոշումները և եզրակացությունները~~.~~

3) ընդունում է հրամաններ, Հանձնաժողովի անունից ստորագրում է պաշտոնական փաստաթղթեր, տալիս լիազորագրեր և կնքում պայմանագրեր.

4) ներկայացնում է Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում:

~~2. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա հանձնարարությամբ նրան փոխարինում է Հանձնաժողովի անդամներից որևէ մեկը, իսկ հանձնարարություն տալու անհնարինության դեպքերում՝ Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:~~

2. Արձակուրդի կամ գործուղման դեպքում Հանձնաժողովի նախագահը Հանձնաժողովի անդամներից մեկին նշանակում է իրեն փոխարինող: Փոխարինող չնշանակելու, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահի ժամանակավոր անաշխատունակության, լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում Հանձնաժողովի նախագահին փոխարինում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

3. Հանձնաժողովի անդամը՝

1) համակարգում է Հանձնաժողովի գործունեության առանձին ոլորտներում աշխատանքների կատարման գործընթացը.

2) ներկայացնում է առաջարկություն Հանձնաժողովի նիստերի օրակարգում ընդգրկվող հարցերի վերաբերյալ.

3) մասնակցում է Հանձնաժողովի նիստերին~~:~~.

4) ստորագրում է Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները:

4. Հանձնաժողովի անդամների միջև համակարգման ոլորտների բաշխման հետ կապված հարցերը կարգավորվում են Հանձնաժողովի որոշմամբ:

Հոդված 23. Հանձնաժողովի գործառույթները

1. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) բարձրաստիճան պաշտոնատար անձանց անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց, բացառությամբ պատգամավորների, դատավորների և դատախազների, էթիկայի կանոնների, իրավիճակային շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը.

2) հայտարարագրման գործընթացը կանոնակարգելը, հայտարարագրերն ստուգելն ու վերլուծելը.

3) օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների կիրառման միասնականությունն ապահովելը.

4) կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող քաղաքականության մշակմանը մասնակցելը÷.

-5) իր կողմից մշակված հակակոռուպցիոն ծրագրերի և միջոցառումների կատարման նկատմամբ մոնիթորինգի իրականացումը և դրանց վերաբերյալ իրավասու մարմիններին առաջարկությունների ներկայացումը.

6) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման.

7) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատավորների և դատավորների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման:

Հոդված 24. Հանձնաժողովի լիազորությունները

1. Հանձնաժողովը՝

1) քննում և լուծում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց (բացառությամբ պատգամավորների, դատավորների և դատախազների) էթիկայի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ.

2) իրավասու մարմնին կամ պաշտոնատար անձին ներկայացնում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, էթիկայի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ (այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ).

3) վարում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց և հայտարարագրերի ռեեստրը.

4) սահմանում է հայտարարագրի ձևանմուշը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները, հայտարարագրերի ռեեստրի տվյալների ցանկը,

հայտարարագրերի ռեեստրի վարման, հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու, հայտարարագրի արխիվացման կարգերը, ինչպես նաև հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանությունը և ռիսկային չափորոշիչները.

5) հրապարակում է հայտարարագրերը.

6) քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր.

7) համապատասխան մարմինների էթիկայի հանձնաժողովներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն.

8) ներկայացնում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց (բացառությամբ պատգամավորների, դատավորների և դատախազների) էթիկայի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.

9) մեկնաբանում է սույն օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները և այլ սահմանափակումներ.

10) վերանայում է համապատասխան մարմինների էթիկայի հանձնաժողովների եզրակացությունները.

11) վարում է անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրություն և հրապարակում տվյալներ.

12) իրականացնում է կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային) նախագծերի փորձագիտական վերլուծություն և դրանց վերաբերյալ ներկայացնում է առաջարկություններ իրավասու մարմին.

13) մշակում է կոռուպցիայի կանխարգելման ծրագրեր և դրանք ներկայացնում է Կառավարություն.

14) իրավասու մարմին կարծիք է ներկայացնում կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ.

15) իրավասու մարմին ներկայացնում է իր գործունեության ընթացքում վեր հանված՝ կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող հարցերի կարգավորման բացերի և թերությունների շտկմանն ուղղված առաջարկություններ.

16) մշակում է կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրեր և իրականացնում միջոցառումներ.

17) առաջարկություններ է ներկայացնում կրթական, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների վերապատրաստումների ծրագրերում հակակոռուպցիոն դասընթացներ ներառելու և կազմակերպելու վերաբերյալ.

18) կրթական ծրագրերի իրականացման համար տրամադրում է ուսումնամեթոդական ուղեցույցներ և այլ նյութեր~~։~~.

19) կազմում է իր կողմից մշակված հակակոռուպցիոն ծրագրերի և դրա իրականացման միջոցառումների ծրագրի (այդ թվում՝ ոլորտային) կատարման վերաբերյալ մոնիթորինգի զեկույցներ, դրանց վերաբերյալ ներկայացնում է առաջարկություններ իրավասու մարմիններին.

20) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության, կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության վերաբերյալ իրականացում է ուսումնասիրություններ և դրանց արդյունքներով ներկայացնում է խորհրդատվական բնույթի եզրակացություններ.

21)«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատավորների և դատավորների թեկնածուների բարեվարքության, կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության վերաբերյալ ներկայացնում է խորհրդատվական բնույթի եզակացություններ:»:

1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով նախատեսված ուսումնասիրությունների իրականացման և դրանց արդյունքներով եզրակացությունների ներկայացման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 12-րդ և 15-րդ կետերով նախատեսված դեպքերում առաջարկությունն ստացած մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է 30-օրյա ժամկետում քննարկել այն և արդյունքների մասին տեղեկացնել Հանձնաժողովին:

Հոդված 42. Եզրափակիչ և անցումային դրույթներ

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Ազգային ժողովի կողմից Հանձնաժողովի առնվազն երեք անդամների նշանակվելուց հետո:~~

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Ազգային ժողովի կողմից Հանձնաժողովի առաջին կազմի անդամների ընդհանուր թվի մեծամասնության նշանակման օրվանից, բացառությամբ 9-րդ, 10-րդ հոդվածների, 23-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև 24-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ, 21-րդ կետերի և 1.1-ին մասի, որոնք ուժի մեջ են մտնում սույն հոդվածի 2-րդ և 2.1-ին մասերով սահմանված ժամկետներում:

2. Սույն օրենքի ~~9-15-րդ~~ 9-րդ և 10-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2018 թվականի ապրիլի 10-ից:

2.1. Սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերը, ինչպես նաև 24-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ, 21-րդ կետերը և 1.1-ին մասն ուժի մեջ են մտնում «Հանրային ծառայության մասին» օրենքում և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում համապատասխան փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո:

~~3. Սույն օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված մրցույթն առաջին անգամ անցկացվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 45 օրվա ընթացքում:~~

~~4. Ազգային ժողովը Հանձնաժողովի առաջին կազմի երեք անդամների նշանակում է վեց, իսկ երկու անդամների՝ չորս տարի ժամկետով՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր թեկնածուի համար Խորհրդի ներկայացրած պաշտոնավարման ժամկետները:~~

~~5. Հանձնաժողովի կազմավորման պահից ուժը կորցրած ճանաչել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ գլուխը, բացառությամբ 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի:~~

3. Հանձնաժողովի առաջին կազմը ձևավորվում է հետևյալ կերպ՝ մինչև 2019 թվականի նոյեմբերի 30-ը Ազգային ժողովը «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակում է Հանձնաժողովի հինգ անդամներին հետևյալ ժամկետներով՝

1) Հանձնաժողովի երկու անդամ՝ 6-ական տարի.

2) Հանձնաժողովի երկու անդամ՝ 4-ական տարի.

3) Հանձնաժողովի մեկ անդամ՝ 3 տարի:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում նշված Հանձնաժողովի մեկական անդամի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն Կառավարությունը և Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը, 2-րդ կետում նշված պաշտոններում՝ Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը, իսկ 3-րդ կետում նշված

պաշտոնում՝ Բարձրագույն դատական խորհուրդը: Սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջի կատարումն ապահովում են Կառավարությունը և Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը: Հանձնաժողովի առաջին կազմի բոլոր անդամների նշանակումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողովն իր կազմից՝ Հանձնաժողովի անդամի լիազորությունների ժամկետով, ընտրում է Հանձնաժողովի նախագահ: Մինչև Հանձնաժողովի նախագահի ընտրվելը Հանձնաժողովի նախագահի լիազորություններն իրականացնում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 8-րդ գլուխը:

8. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունները

Հավելված 1
«Պետական ~~պաշտոն~~պաշտոններ և պետական ծառայության ~~պաշտոն~~պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ

Պաշտոնի անվանումը	Գործակիցը
1	2
Հանրապետության նախագահ	20.00
Վարչապետ	19.00
Ազգային ժողովի նախագահ	18.00
Սահմանադրական դատարանի նախագահ	16.00
Բարձրագույն դատական խորհրդի նախագահ	16.00
(փողը հանվել է 08.05.19 ՀՕ-32-Ն)	
Փոխվարչապետ	15.50
Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար	15.50
Մարդու իրավունքների պաշտպան	15.00
Վճռաբեկ դատարանի նախագահ	15.00

	Հաշվեքննիչ պալատի նախագահ	15.00
	Գլխավոր դատախազ	15.00
	Ազգային ժողովի նախագահի տեղակալ	14.00
	Ինքնավար մարմնի նախագահ	14.00
	Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ	12.00
	Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահ	12.00
	Նախարար	12.00
	Ազգային անվտանգության ծառայության տնօրեն	12.00
	Ոստիկանության պետ	12.00
	Պետական եկամուտների կոմիտեի նախագահ	12.00
	Պետական վերահսկողության ծառայության ղեկավար	12.00
	ՀՈՒ գլխավոր շտաբի պետ	12.00
	~~Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ~~	~~12.00~~
	Սահմանադրական դատարանի դատավոր	12.00
	Բարձրագույն դատական խորհրդի անդամ	12.00
	Հատուկ քննչական ծառայության պետ	12.00
	Քննչական կոմիտեի նախագահ	12.00
	Ինքնավար մարմնի անդամ	12.00
	Վերաքննիչ դատարանի նախագահ	11.50
	Վճռաբեկ դատարանի դատավոր	11.50
	Վարչական դատարանի նախագահ	11.00
	Առաջին ատյանի դատարանի նախագահ	11.00
	Վերաքննիչ դատարանի դատավոր	11.00
	Գլխավոր դատախազի տեղակալ	11.00
	Գլխավոր ռազմական տեսուչ	10.50
	Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ	10.50
	Հատուկ հանձնարարություններով դեսպան	10.50
	Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար	10.50
	Պետական պահպանության ծառայության պետ	10.00
	Քրեակատարողական ծառայության պետ	10.00
	Փրկարար ծառայության տնօրեն	10.00
	Դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարող	10.00
	Ազգային ժողովի պատգամավոր	10.00
	Դատական դեպարտամենտի ղեկավար	10.00

	~~Ինքնավար և անկախ~~ Անկախ պետական մարմնի նախագահ	10.00
	Մարզպետ	10.00
	Հաշվեքննիչ պալատի անդամ	10.00
	Նախարարի առաջին տեղակալ	10.00
	Կառավարությանն ենթակա մարմնի ղեկավար	10.00
	Ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ	10.00
	Ոստիկանության պետի առաջին տեղակալ	10.00
	Պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ	10.00
	ՀՈՒ գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ	10.00
	Վարչական դատարանի դատավոր	10.00
	Առաջին ատյանի դատարանի դատավոր	10.00
	~~Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ~~	~~10.00~~
	Նախարարությանը ենթակա մարմնի ղեկավար	9.00
	Երևան քաղաքի դատախազ	9.00
	Նախարարի տեղակալ	8.50
	Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտի ղեկավար	8.50
	Հատուկ քննչական ծառայության պետի տեղակալ	8.50
	Քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետ	8.50
	Ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ	8.50
	Ոստիկանության պետի տեղակալ	8.50
	Պետական պահպանության ծառայության պետի առաջին տեղակալ	8.50
	Պետական վերահսկողության ծառայության ղեկավարի տեղակալ	8.50
	Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ	8.50
	ՀՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալ	8.50
	Գլխավոր ռազմական տեսուչի առաջին տեղակալ	8.50
	Քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալ	8.50
	~~Ինքնավար և անկախ պետական մարմնի նախագահ~~ Անկախ պետական մարմնի նախագահի տեղակալ	8.00
	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար	8.00
	Վիճակագրության պետական խորհրդի անդամ-վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ	8.00
	Կառավարությանն ենթակա մարմնի ղեկավարի առաջին տեղակալ	8.00
	Մարզպետի տեղակալ	8.00

	Մարզի դատախազ	8.00
	Կայազորի զինվորական դատախազ	8.00
	Պետական պահպանության ծառայության պետի տեղակալ	7.50
	Քրեակատարողական ծառայության պետի տեղակալ	7.50
	Փրկարար ծառայության տնօրենի տեղակալ	7.50
	Գլխավոր ռազմական տեսուչի տեղակալ	7.50
	Գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ	7.50
	~~Ինքնավար և ա~~Ն նկախ պետական մարմնի անդամ	7.50
	Կառավարությանը ենթակա մարմնի ղեկավարի տեղակալ	7.50
	Վիճակագրության պետական խորհրդի անդամ	7.50